և թագաւորեց ընդ ամենն 67 տարի, անուն բարի թողլով Եգիպտացւոց պատմութեան մէջ. նախ իբր փառահեղ թագաւոր և երկրորդ իբր օրինակելի իշխան։ Բայց իր յաջորդները նսեմացուցին Եգիպտոսի փառքը։

Քիչ արձանագրութիւնք բնականաբար ցոյց կուտան, սակաւ և վրդովալից ժամանակի մը շրջանը, որ անցաւ յետ Հոմսեսի մահուան և տիրապետութեան Արիսուի։ Արդէն կողմնակի ժառանգները՝ արհամարհելով ժառանգութեան օրէնքը՝ կ'իշխէին Մենեփտահի և իր որդւոյն Սիտի երրորդի ժամանակները, և Եգիպտոս կը կառավարուէր առանց հեղինակութիւն ունեցող իշխաններով։ Դարձեալ այս ժամանակս Եգիպտոս տկարացեր էր՝ Մենեփտահի՝ պահակ զօրքերը ետ կանչելովը, ասով Եգիպտոս եղաւ տուն մը առանց դրան. և այս առեններս է որ ընկճեալ ազգաց նահանգապետներէն մին Արիսու, յարմար առթէն օգտուելով տապալեց ԺԹ Հարստութիւնը. ըստ արձանագրութեան. «Արիսու՝ որ եղաւ պետ նահանգներու իշխանաց մէջ, ստիպեց ամբողջ երկիրը իր դիմացը յարգանք մատուցանել». և սակայն իրմով ալ նոր հարստութիւն չսկսաւ, վասն զի իր բռնապետութիւնը իրմով վերջացաւ։ Ցիշատակութիւն չկայ թէ քանի տարի Արիսու տիրապետեց, սակայն Բ. Հոմսեսի մահուընէն մինչև անկումն Արիսուի 19 տարի ժամանակամիջոց մը կայ. վասն զի ըստ Ելից՝ Մովսիսի ուսմունքորդ տարին տեսիլ կը տեսնէ հրով վառեալ մորենի. ապա կը յաւելու «Եւ յետ աւուրցն բազմաց այնոցիկ վախճանեցաւ արքայն Եգիպտացւոց (Սիտի Գ.), և ասէ Տէր ցՄովսէս ի Մադիամ. Գնա և երթ յԵգիպտոս զի մեռան ամենայն արք որ խնդրէին զանձն քո»։ Արդ Մովսիսի 80ներորդ տարին կը մեռնի փարաւոն մը, և նոյն տարին ինքն Մովսէս կը մտնէ Եգիպտոս և իսկոյն անկից կը հանէ Իսրայելացիները։ Ասկից կը հետևի թէ Արիսու բռնաւոր և ոչ մէկ տարի իշխած է Եգիպտոսի վրայ։

Շարունակելի Հ. ԽՈՐԷՆ Ս.

ՔԱՋԱՍԻՐՏ ԹԱԳԱՒՈՐԸ

Պ. Կ. Բասմաճեան ընդդիմաբանելով մեր Արտաւազդի մասին գրած և բերած փաստերուն, (որով մենք ուղղակի անհիմն կը համարէինք Հռոմայեցի պատմիչներու գրածներն, և անուղղակի կը հերքէինք Պարոն ընդդիմախօսի սխալ ենթադրութիւնները «վատասիրտ» կոչելու մեր թագաւորներու համակրելի դէմքերէն մէկն), հաճեր է կրկին անգամ հանդէս գալ նոյն իսկ « Բազմավէպ »ի Սեպտ. պրակի էջերուն՝ վերահաստատելու նոյն սխալ և թիւր դատողութիւնները, յենլով Պլուտարքոսի և Ստրաբոնի տարակուսական և վիճելի վկայութիւններու վրայ։ Ազգային պատմութեան շատ մը մութ կէտերէն մին լուսաբանելու սիրով՝ կրկին կը վերադառնանք նոյն նիւթին վրայ, հիմնական փաստերով, ըստ մեր տկար դատողութեան, հաւաստելու մեր թագաւորի քաջասրտութիւնն, և Անտոնիոսի վատասրտութիւնն զրպարտութեան մէջ։

Հռոմայեցի պատմիչներէն վկայութիւն քաղելու ժամանակ, չսխալելու համար, պէտք է Տակիտոսի գրածն աչքի առաջ ունենալ։ Նա ինքն իւր տարէգրութիւններն իսկ գրած պահուն՝ դիտել թէ իրմէ առաջ ինչ ոճով և սիստեմով գրած են պատմիչներն, ու ինքն կ'առաջադրէ բռնել միջին ճանապարհը, որուն կ'ուզենք հետևիլ նաև մենք։ Նա այսպէս կը գրէ.

«Վաղնջականի ազգին հռովմայեցւոց յաջողութիւնք և արկածք յականաւոր մատենագրաց արձանագրեցան. և ոչ պակասեցին արք գերահանարք ժամանակագրել զիրս Աւգոստեայ, մինչչև շողոմից զվերհրոտութիւն ի ներքս մուծեալ։ Վասն որոյ Տիբերի, Կալիգուլեայ, Կլաւդեայ և Ներոնի պատմութիւնք առ ինքնակալութեամն նոցա առ երկիւղի, և յետ մահու նոցա՝ զի դեռ ևս վառ և բորբոք էր ատելութիւն՝ ստայօղք աւանդեցան։ Այսր

ազազաւ խորհեցայ սակաւուք և զԱւգոստեայ աւուրցն վերջնոց անցանել, և ապա զՏիբերի և որ զհետ նորին ինքնակալաց ի գրի առնել զպատմութիւն, յերկաքանչիւրոցն ևս անայլայլակ՝ յատելութենէ և յաչառութենէ, որոց պատճառք քաջ ի բացեայ են յինէն»։

Եւ իրաւունք ունի, համոզուելու համար երկար ուսումնասիրութեան հարկ չկայ. բաւական է կարդալ Փոքր Պլինիոսի՝ Տրայանոսի վրայ խօսած դամբանականն, որ ամէն ողջամիտ քննադատի զայրոյթն կը յարուցանէ. և կամ Սուետոնիոսի տասն և երկու կայսերաց պատմութիւնն. յորում մէկ երեսն անոնց կենդանութեան օրով գրուած՝ սուտակասպաս և հացկատակ պատմիչներու գրոյցներն են. իսկ միւսն յետ մահուան, անոնց բռնութիւններէն նեղուած և հալածուած գրիչներն, դառնութեամբ և քինախնդրութեամբ լցուած, սեցուցեր և ցեխի մէջ կոխեր են մի և նոյն անձը։

Հռոմէական պատմութեան գոգ գլխաւոր ատաղձն՝ հաւաքուած է դամբանականներէ կամ դրուատիք կոչուած բանախօսութենէ մը զոր սովորաբար մերձաւոր ազգականը՝ կամ բարեբարբեալ կամ ազատագրեալ մը կը խօսէր մեռելի վրայ։ Ճառախօսութեանցս մէջ ամենայն կերպով կը զգուշանային թերութիւններ յիշելէ. եթէ ակամայ յիշելու հարկն ըլլար, կը ջանային գեղերեսել, կամ պատճառներն ու պարագան հեռաւորի կամ մեռածի մը վրայ բարդել։ Այս ընդունուած սովորութիւն մ'էր Հռոմայեցւոց մէջ, մանաւանդ սրբազան պարտականութիւն։ Բազում հրաշալիք, բազում առասպելախառն պատմութիւններ, ներելի էին խառնել իրականի և ճշմարտի հետ, բաւական էր որ այդ ստեղծագործութեանց մէջ արտափայլէր Հռոմի ժողովրդեան, իրենց վարիչներու և զօրքի գերբնական ոյժն, անսխալական առաջնորդութիւնն. իսկ հակառակորդի՝ տկարութիւնները, սնոտիապաշտութիւնները, և հաւատադրժութիւնները։

Արդ Անտոնիոս երևելի բարձով Հռոմայեցւոց մէջ, արտօնուած դասակարգին կը պատկանէր, որոց նախնիքն եղած էին Քաջք և դիցական պատուին արժանացած։ Հերակլէսի սերմանէն կը համբաւէր սերած լինել, որուն հասակն և ոյժն, շատ պատմըչաց կը թուէին հաւաստել կարկառած առասպելաբանութիւնն։ Նա ըստ Հռոմէական մեծամտութեան կամ իշխանասիրութեան, որուն համընթաց էր ընչաքաղցութիւնն, կ'ուզէր որ իր չնչին արարքներն անգամ գրի անցնէին. ասոր համար հետը կը պտտցնէր մէկի տեղ՝ երկու պատմիչներ։ Սոքա, թերևս ազատագրեալներ իսկ, երախտագիտութեամբ լցուած, չէին կարող այլազգ գրի անցնել բոլոր Անտոնիոսի արարքներն, բայց եթէ կեղծ լուսով պատկերելով անոր տգեղ գործերն, թերութիւններն և պարտութիւններն։

Անտոնիոսի ախոյեանն Հոկտաւիանոս կեսարն էր, պէտք էր զնա Հռոմի տիրոջ հաւասար բարձրութեան մէջ կանգնեցնել, Արևելքի իշխեցողն, Յուլ. Կեսարու զօրողն։

Այս ոճով և դրութեամբ գրուած մենագրութիւններն (monographies) ինչ նշանակութիւն կրնան ունենալ, ընդհանուր և անկողնակալ պատմութեան մէջ, որոնք, հասարակաց դատողութեամբ՝ գրուած են ողջամիտ, անաչառ և բազմակրկիտ պատմիչներուց. որոց վկայութեան վրայ յենլով արդի երևելի պատմագիրներն և քննասէրներ, ջանացեր են հանել աւելի բնական և ճշմարտապատում եզրակացութեանց։ Սոքա առանձին դէպքերու կարևորութիւնը ընդհանրութեան մէջ փոքր տեսեր են։ Մի մարդու, մի պատերազմական արշաւանքի բովանդակ ընթացքն՝ համեմատական քննութեան ենթարկելով, գտեր են որ Հռոմայեցի անհատական պատմիչները կամ սխալեր են և մեծցուցեր են, և կամ կեղծեր են։ Այս անդրադարձութիւնը նոր քննական ժամանակի գործ կամ գիւտ չէ, այլ երբ Հռոմէական տէրութիւնն յուժի էր և տէր ծանօթ քաղաքական աշխարհի, Յոյն պատմիչներն պայքարի մտան Հռոմայեցիներու հետ՝ ապացուցանելով թէ վերջիններս իրենց նախնական պատմութիւններն և դիւցական անձինքներն՝ ձևեր են

© National Library of Armenia

հին յունական պատմութեանց և դիւցազանց բարուց և վարուց վրայ։ Նուաճուած Յոյն գիտնոց ձայնն խեղդուեցաւ Հռոմէական ժողովրդեան աշխարհազգորդ և խառնակ ձայներէն. սուտութիւնն և կեղծիքն յաղթանակեցին, որու բացերև հաւաստիքն մեր առջև ունինք, քաջասիրտ Թագաւորի հաւատադրժութեան մասին գրուած այլրող առասպելը։

Յիշեցինք վերև, ողջամիտ, անաչառ և բազմակրկիտ պատմիչներու գրածներն մեզի կրնան հաւատք ներշնչել. արդ ըստ մեր բարեմիտ ընդդիմախօսին՝ Պլուտարքոս անոնցմէ մէկն է. Ուրե՞մն։ Այո՛. եթէ Պլուտարքոս գրած ըլլար ինքնաբերաբար, իբրև իմաստասէր և ճշմարտութեան հետամուտ, և իբր ազատ յոյն մը. մինչ նա հպատակ մ'էր օտար և տիրապետող հզօր տէրութեան մը, և կը գրէր Հռոմայեցիի մը խնդրանօք, որուն թերևս երախտագիտական կապերով պարտաւորուած էր, և այդ խնդիրքը պայմանով մ'և առաջարկուած էր, այսինքն՝ Զուգակշիռ մը գրել Յոյն և Հռոմայեցի երևելի արանց։ Ասով Պլուտարքոսի յորդառատ և բեղուն գրիչն, երկու ափերու միջէն պիտի ընթանար համբոյր տալով ինչ որ կանաչ էր, գեղեցիկ և ծաղիկ էր երկու ազգի համար, թէ և յատակի և կողերու քարերուն և ժայռերուն ընդհարուէր։ Յամենայնի անոնց քաջութիւնն, առաքինութիւնն գերակշիռ տեղ պիտի բռնէին, իսկ պակասութիւններն, ախտերն և ոճիրներն, յատակն իջնելով, վրայէն պիտի վազէր սահէր գրուածքն, ստուերի մէջ թողլով խեղութիւնը։ Այս պայմաններու մէջ Պլուտարքոս հազիւ ազատ լինէր խուսափ անաչառ և անկողմնակալ մնալէ, մանաւանդ Անտոնիոսի դէպքի մէջ, որ աստուածորդի մ'էր, հազիւ թէ Յոյնը թոյլ տար իրեն բացայայտ կերպով գրել թէ՝ Անտոնիոս դաւաճան և հաւատադրուժ եղաւ առ արքայն Հայոց, բարեկամն Հռոմայեցի ժողովրդեան և դաշնակից պատերազմի։ Այլ նա ստիպուած էր հարևանցի յիշել պատմութեան ընթացքի մէջ, Անտոնիոսի շնթող պատմիչներու գրածներն, որ մեծապէս կը շոյէր Հռոմայեցոյն մեծամտութիւնն և փառասիրութիւնն, թողլով այն միամտութեան մէջ՝ թէ Հռոմայեցին անյաղթ է ամենուրեք, գերմարդկային։ Իսկ ձախորդութիւններն և քիչ մ'ալ աղաղակող պարտութիւններն՝ տեղի ունեցած են բարբարոսներու մատնութեամբ կամ դաշնակից թագաւորի մը դաւաճանութեամբ։ Սակայն, Պլուտարքոս անհամեմատ աւելի բարեկամիտ քան զիւր Հռոմայեցի բարեկամն և իբրև իմաստասէր՝ ճշմարտութեան սիրող, չուզելով որ իւր գրչէն ելած ակնածող կեղտն՝ իբր պատմական հաւաստիք՝ վիրաւորէ պատուասէր և խօսքի տէր Հայոց արքային համբաւն, Դեմետրի հետ ըրած զուգակշռին մէջ, վերջին եզրափակութիւնք գրած պահուն՝ կարճի պէս յետին ծայրով կինը կը խրէ Անտոնիոսի սիրտը, թող կարդա Պարոն Բասմաճեանն։

« Իսկ յերդմնահարութիւնս երկոցուն սոցա և յուխտազրուժ ի կիրսն, մին՝ ի դիպահոջ զԱրտաւազդ առնելով, և միւսն զԱղեքսանդրոս ի մահվարելով, ՊԱՏՃԱՌՍ ԻՄՆ՝ առհասարակ ասեն ունել Անտոնիոսի, ԻԲՐՈՒ ՈՐ ելից եթող զնա Արտաւազդ ի Մարս և մատն եղև »։ Կլոր խօսքերով կը թարգմանուի՝ որ Անտոնիոս Մարաստանի մէջ չարաչար յաղթուելով, դաւաճան և հաւատադրուժ եղաւ առ արքայն Հայոց և ոչ փոխադարձ։

Անտոնիոսի պատմութեան մէջ, չկայ որ նա առանձին գործ կատարած կամ պատերազմի մէջ յաղթած ըլլայ իր թշնամիներուն։ Կեանքի կէսն Յուլիոս Կեսարու թևի տակ կռուեր և յաղթեր է. իսկ երբ ինքնագլուխ եղաւ և ինքնակալ Արևելքի, Պլուտարքոս զուգակշռելով Դեմետրի հետ կը գրէ. « Առ այս՝ և յաջողակս նահատակութեանց նոցա, Դեմետրիոս անձամբ անձին ի գլուխ տարաւ զգործսն. իսկ Անտոնիոս՝ ինքն մերձ չգոլով՝ յաղթութիւնս զգեղեցիկսն և զմեծամեծսն կատարեաց ի ձեռն զօրավարացն »։ Մ'ենք մէկը յիշենք։

Պարթևաց դէմ մղած պատերազմին ինքն կամեցաւ անձամբ հրամայել, և չարաչար

© National Library of Armenia

յաղթուեցաւ. պարտութեան ամօթն մեղմացնելու համար Ներակուտի, Հռոմի ժողովրդեան և Օգոստոսի առջև, և միանգամայն ատելի ընելու համար զԱրտաւազդ և չէզոքացնելու դիտմամբ, համբաւեց զԱրտաւազդ և զՀայերն դաւաճան և հաւատադրուած Հռոմէական բանակին։ Թէև Հռոմի մէջ ոչ ոք հաւատաց Անտոնիոսի գրկած սուտ լուրերուն։ Սակայն այսպիսի ամբաստանութիւն, պէտք է գիտենալ, որ առաջին անգամը չէ որ Հռոմայեցի թշուառական զօրավարներն կը կարկատեն մեր աչալուրջ թագաւորի նկատմամբ։

Անտոնիոսէ առաջ տարաբաղդ Կրասոսն այդ մուրն ուզեց քսել, բայց իւր կորստեան վէճի մէջ թագուեցաւ իւր զրպարտութիւնն և սպառնալիքն։ Անոր պակաս լրացուց Անտոնիոս՝ շնորհիւ ողջ վերադարձին ձախող պատերազմէն, և պատճառ եղաւ սուտի հաստատուելուն։

Բայց մեր նպատակին համար բաւական չհամարելով ցոյս վայր գրածնիս ի նպաստ Արտաւազդի քաջասիրտ, պատուոյ և իսօքի տէր լինելուն, պիտի ջանանք իսկզբանէ քննել այս կարի կարեւոր միջադէպս, տոհմային և օտար պատմիչներէ աւանդուած, հաւաստելու համար թէ մենք ունէինք իրաւունք մեր նախընթաց յօդուածի մէջ զԱրտաւազդը կոչելու ՔԱՋԱՍԻՐՏ թագաւոր։

ԹԵՆԱՄՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՌՈՒԹԸ

ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՏՃԱՌԸ

Կրասոսի պատերազմն անիրաւ էր, վասն զի Պարթևք խաղաղութեամբ էին. բայց հռովմայեցին կը կամենար պատերազմը իւր անձնական շահուն համար, իւր փառասիրութեան, ընչաքաղցութեան համար։ Կրասոս՝ հռովմէական նկարագրին տիպարնեբէն մէկն էր։ Տես ինչ կը գրէ սորը համար Պլուտարքոս. « Այլ ինձ թուի թէ Կրասոսի յիւր մասնաւոր գնացս ոչինչ փոյթ էր՝ ճշմարիտ իցէ թէ սուտ. իրաւացի՞ իցէ, թէ անիրաւ։ Ոչ պահէր ի մասինդ այդմիկ և ոչ նշմար ինչ»։ Հռոմայեցուն համար ամենայն ինչ իրաւացի է, արդար և ճշմարիտ, երբ ուժով կրնայ ոտնակոխ ընել իրաւունք և արդարութիւն։ Կրասոս մտածեց թէ կրնայ յաղթել, ուստի արդար թուեցաւ յարձակիլ խաղաղ և բարեկամ Պարթևաց վրայ։

Պարոն Բասմաճեանն՝ ներկայ համաշխարհական պատերազմի պատճառներն քննողներու հետ՝ եթէ քննութեան առնուն Կրասոսի և Անտոնիոսի յարուցած պատերազմի պատճառներն, նոյն ատեն պիտի հասկանայ՝ թէ Հայոց թագաւորն դաւաճանեց արդեօք նախ Կրասոսի, և ապա Անտոնիոսի, թէ երկու դէպքի մէջ ևս, նա մարդավայել և ուղղախոհութեամբ վարուեցաւ, խոստանալով այն՝ ինչ որ կրնար, և խորհուրդ տալով այն՝ ինչ որ օգտակար էր դաշնակից և բարեկամ զօրավարներուն և նաև իւր թագաւորութեան։

Նախ Հայոց բարեկամութիւնն և նիզակակցութիւնն՝ Տիգրան Մեծն հաստատեց Մեծին Պոմպէոսի հետ։ Մեր վեհանձն թագաւորը՝ Պոմպէոսի Պարթևաց դէմ արշաւած բանակին կը շնորհէ ձմերել Հայաստանի մէջ և կերակրել ևս իւր ծախքով։ Տիգրանի այս առատաձեռնութիւնն՝ ոմանք Հռոմայեցի պատմիչներէն կը համարին իբր տուգանք մը Պոմպէոսի կողմէն գրուած Տիգրանի վրայ։ Մինչդեռ Դիոն Կասսիոսի խօսքերէն կարելի է հաւաստել, որ Տիգրան բռնադատութեան ենթարկուած չէ բնաւ, բաց ի անառակ որդին թողլով իւր բարեկամին ձեռքը, պատժելու արժանաւոր կերպով՝ հօր և հայրենիքի դաւաճանը։ Վասն զի եթէ Տիգրան բռնադատուած լինէր կերակրելու և ձմերոց տալու Պոմպէոսի զօրաց, Դիոնի ասելով « ինչո՞ւ ուրիշ շատ բաներ և այնքան մեծ քանակով դրամ կուտար, որ պայմանաւորածէն շատ աւելի էր »։ Շատ ժամանակ յետոյ Պոմպէոս այդ ընծաներն և դրամներն յաջողութեամբ փոխադրեց Հռոմ և հոն Ներակուտին առջև յայտարարեց թէ՝ ոչ միայն Տիգրան բարեկամ էր Հռոմի ժողովրդեան, այլ նաև պատերազմի դաշնակից։

Մինչ այս վիճակի մէջ էր Հայաստանի և Հռոմի յարաբերութիւնները, և վերջինները խաղաղութեամբ կ՚ապրէին Պարթևներու հետ, Կրասոս գաղափար յղացաւ պատերազմ յուզելու Պարթևաց դէմ։ Որովհետև մեծ էր Հռոմի ոյժը, ուրեմն արդար էր հարստահարել և նուաճել զարկերը, որ ոչ երբէք պիտի կարենար բողոքել անիրաւութեան դէմ. տկարի անյանցանքն իւր անմեղութիւնն է։ Պատերազմը կը սկսի ընչաքաղցութեամբ՝ կողոպտելով մեհեաններ և սրբավայրեր։ Նոյն իսկ բարեկամական, բայց խրոխտ առաջարկութիւն մը Պարթևաց թագաւորին Արշակայ, ընդունելի չեղաւ Կրասոսի յետ կեցնելու վտանգաւոր ձեռնարկէն։

Հայոց թագաւորն ապա Կրասոսի կոչին անսալով, իբրև դաշնակից՝ կ՚ինչնէ Հռոմայեցւոց բանակն, վեց հազար հեծեալներով և երեսուն հազար հետեակներով, զամենքն իւր ծախքովը կերակրելով։ Արտաւազդ խորհուրդ կուտայ թողուլ Միջագետքի դաշտերն, և Հայաստանի վրայէն արշաւել Պարթևաց դէմ. վասն զի բարեկամ երկիրներէ պիտի անցնէին, և առատութիւն պարենի կը գտնէին։ Մեր լեռնոտ երկիրները Պարթևաց ձիաւորներուն արշաւին խոչընդոտն էին, որով հետևակ զօրքն կրնար յաջողութեամբ կռիւ մղել անոնց դէմ։ Կրասոս արհամարհեց այս կանխատես և խելացի խորհուրդն, արհամարհութիւն ցուցընելով առ Արտաւազդ. բայց Հռոմէական պատմիչներն կը խորհրդածեն, եթէ լսած ըլլար Կրասոս Արտաւազդի տուած խորհրդին, իր անձի և իր բանակի հանդիպած աղէտներէն անշուշտ կ՚ազատէին։

Արտաւազդ թէ և բարեկամ և դաշնակից Հռոմայեցւոց, սակայն ինքն ևս ուներ թշնամիներ, որոնցէն պէտք էր զգուշանալ, չվըտանգելու իւր թագն և թագաւորութիւնն։ Պարթևաց և Մարաց հետ թշնամութեամբ էր. ասոր համար ռազմագիտական քան թէ քաղաքագիտական տեսակէտով, Արտաւազդի ծրագիրն ամենէն խելացին էր. ժողովել բոլոր բնական Հայաստան և ճիշդ նոյն ճամբով՝ որով Մամիկոնեան զօրավարներն կռուեր էին և պիտի կռուէին Պարսից հետ, իջնել էր և Զարեւաւանդ գաւառներն և մինչ Ատրպատական աշխարհն։ Պարթևք այս վտանգին դիմագրաւելու համար, ստիպուած Միջագետքի կողմի բանակի ստուար մասն պիտի փոխադրէին այս ճակատի վրայ. որով Կրասոսի թողած քաղաքապահ զօրքերն կրնային դիմադրել պարթևաց այնքան ժամանակ, որ Հայաստանի բանակն հասնէր մինչև Եկբատան, Պարթևներն այն պարագային գերի չինկնալու համար ստիպուած պիտի հեռանային Միջագետքի կողմերէն, և բարեկամներու բանակներն հնարաւորութիւն կ՚ունենային հաղորդակցութիւն հաստատելու իրենց միջև։ Իսկ Պարթևներն, եթէ Արտաւազդի ծրագիրն լիովին յաջողէր, ստիպուած հաշտութիւն պիտի խնդրէին. և Կրասոս պիտի յաղթանակէր։....

Եւ որովհետև Կրասոս պնդակամութեամբ՝ կեցաւ իւր բռնած ճանապարհի վրայ, Արտաւազդ նախատեսելով յայտնի կործանումն Կրասոսի բանակին, որուն եթէ ինքն հետևէր պիտի վտանգէր նաև իւր զօրքն, և (միւս կողմէն Հայաստանի արևելեան սահմաններն անպատսպար թողած, կը վախենար պարթևաց յանկարծակի ներս խուժելէն), բոլորովին տժգոհ՝ թողուց հեռացաւ իւր զօրքերով։ Եւ չսխալեցաւ Արտաւազդ։ Արշակ երկու դաշնակիցներն բաժնելու համար իւր բանակն երկուքի բաժնած, ստուար մասն յանձնելով Սուրէնի՝ Կրասոսի դէմ կը դրկէ, մինչ ինքն միւս մասի գլուխն անցած կը քալէ Հայաստանի վրայ։

Արտաւազդի մեկնելէն յետոյ Կրասոս կը սպառնայ պարթևաց պատերազմն լմնցընելէն յետոյ, պատժել Հայոց թագաւորի ԱՆՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆն և ըմբոստութիւնն։ Սխալ էր անիրաւ Հռոմայեցի զօրավարի սպառնալիքն և պահանջներն։ Արտաւազդ, անշուշտ համաձայնութեամբ կասիոսի և ուրիշ խելահաս զօրավարներու մեկնած էր Միջագետքի բանակէն, պաշտպանելու աբևելեան ճակատն, զոր եթէ Պարթևներն խորտակէին և մտնէին Հայաստան, Հռո-

© National Library of Armenia

մայեցւոց բանն վատթարագոյն կը լինէր, ինչ որ կը գուշակէին՝ Պարթեւք կը հասնէին մինչև Ասորիք և փոքր Ասիա, ուսկից՝ Հռոմի հանճարեղ և խորամանկ զօրավարներն Լուկուլլոս և Պոմպէոս դուրս վաներ էին զանոնք։

Կրասոս կ'անցնի Եփրատ. փոխանակ հետևելու գետի ընթացքին, որոյ ափերու վրայ կային շէնք, աւանք և քաղաքք, ուսկից կրնար պաշար հայթայթել և Պարթևաց շրջապտոյտէն զերծ մնալ, ՄԱՏՆՉԻ մը խօսքին անսալով, մխեցաւ անապատներն յաղթութեան ուղին համառօտելու ցնորքներով տարուած։

Եղեսիոյ թագաւորն Աբգար, որ շատ կրեր էր Հռոմայեցիներէն, քինախնդրութիւնն և վրէժն ծածկելով կեղծուպատիր բարեկամութեան քօղով, կը վաստկի Կրասոսի վստահութիւնն և կ'անցնի առաջնորդելու նորա բանակին։ Աբգար խորհրդակից էր Սուրենի և բանակի ամեն շարժումներն անոր կ'իմացնէր, և Կրասոսի բանակը աչօք բացօք դէպ ի անյատակ վիհն կը տանէր։ Մինչ խարուսիկ յոյսերով կը զուարճանար, ահա, պատոյ և խօսքի տէր Հայոց թագաւորն, լուր կը ղրկէ Կրասոսի թէ. «Բա՛ց աչքերդ և տե՛ս, Աբգար զքեզ կը խաբէ»։ Եւ կ'իմացնէր թէ Որոնտէս կամ Արշակ արդէն յարձակեր է իւր երկրի սահմաններն, ուստի ըստ խոստմանը չէր կրնար իրեն օգնութիւն ղրկել։ Խրատ կուտամ, կը գրէր Արտաւազդ, զգուշանալ այն տեղերէն, դաշտերէն, ուր հեծելազօրն արձակ համարձակ կրնայ պատերազմիլ, լեռներու վրայէն գնա՛ և պատնիշափակ պաշտպանէ զքեզ։ Եւ կը յաւելու Բոլլէն. «Չկայր ինչ քան զայս խոհական ազդարարութիւն, և Արտաւազդ գնայր ամենայն ուղղութեամբ սրտի»։ — (Բոլլէն. հտ. Զ. էջ 488). — Կրասոս տկարամիտ և գերի իր նախապաշարմունքներուն, մինչ կոյր զկուրայն վստահացած էր մատնչի խօսքերու վրայ, Արտաւազդի մասին «կասկած կալաւ մատնութեան, ուր չկայր և ո՛չ մի». — (Անդ.) Եւ ոչ գրով պատասխանեց, այլ բաւական համարեցաւ բերանացի ասել պատգամաւորին. «Թէ առ ժամս չունիմ ժամանակ երթալ պատասխանել զՀայս. բայց յետ սակաւ միոյ երթայց խնդրել զվրէժ հաւատադրժութեան նոցա». — (Անդ).

Անմիտ Հռոմայեցին, ըստ Ս. գրոց «հասեալ ի խորս չարեաց արհամարհէ» վասն զի իրեն տրուած խոհական խորհուրդներուն ոչ միայն չի լսեր, այլ և կը սպառնայ պատուհասել Հայոց թագաւորի հաւատադրժութիւնն։ Այն ինչ իւր խօսքով ինքզինքը կը մատնէ, որ հաւատադրուժ պիտի ըլլայ, սիրով դաւելով իւր դաշնակցին և Հռոմի ժողովրդեան բարեկամին։ Այդ Հռոմայեցւոց նկարագրին մէջն կայ. եթէ Կրասոս չի յաջողի իւր վատ առաջադրութեան մէջ՝ իրաւունքն կ'անցնի ուրիշի մը գործադրելու զայն աւելի ստոր դաւաճանութեամբ։ Կրասոսի ամբարտաւան սպառնալիքն, պատերազմի բաղդն որոշեց. ան իր կորստեան մուրհակն էր, բերանացի ղրկած էր իւր բարեկամին և դաշնակցին։

Արտաւազդ չտանելով այնքան ամբարտաւանութեան և ապերախտութեան, փութաց հաշտուելու Պարթևաց հետ, որ քան զՀռոմայեցիս նուազ վտանգաւոր թշնամիք էին Հայաստանի։ Պարթեւք միացեալ ուժերով ինկան Կրասոսի բանակի վրայ։ Հռոմայեցիք այդպիսի աղէտալի և անփառունակ պարտութիւն կրած չէին։ Կրասոս դեռ չմեռած ամբաստանեց զԱրտաւազդ իբր հաւատադրուժ, և սպառնացաւ պատերազմէն վերջ պատժել Հայ ժողովուրդը. սակայն անոր հակառակ՝ հին և նոր պատմիչներն կը գովեն Արտաւազդի բռնած ընթացքը, և բոլոր պարտութեան փառքներն անոր անմիտ կամապաշտութեան և թեթևամտութեան կ'ընծայեն։ Բոլլէն, որ համառօտեր է Հռոմէական պատմիչներն, կը դրուատէ Արտաւազդի նկարագիրն, անոր «խոհական խորհուրդն և կատարեալ սրտի ուղղութիւնն»։ Այսչափս մեզ բաւ է։ Յաջորդ յօդուածով պիտի ջանանք ապացուցանել Արտաւազդի անփոփոխ նկարագիրն, և անոր բարեկամ և դաշնակից Անտոնիոսի վատասրտութիւնն և հաւատադրժութիւնը։

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՑ

© National Library of Armenia